


տէին, որ իմ հանդէսը կամ թերթը վնասակար մոքեր է բովանդակում և արծարծում, կարող էին դադարեցնել, իբրև պատիժ, մի առ ժամանակ, կամ ընդ միշտ թերթեցէք Ռուսաստանի հայ թէ օտար մամուլի մօտիկ ոնցեալի պատմութիւնը և նման տուր երեսյթներ արձանադրուած կը դանէք բազմաթիւ էջերում:

(Նարունակելի) .



## ՏՐԱՊԻԶՈՆԻ ՀԱՅ ԳԻՒՂԱՑՈՒԿ ԿԵԱՆՔԸ

(Նարունակութիւն)

Խաղողնուտ հայերէն բառ ևս չունին հայ գիւղացիք թուրքի իւզումլուք կառեն, այդ տեղ յատուկ այգի չկայ և ոչ սարփինայ, այլ խաղողի մի վազ (որթ) կուղզէ տան շուրջը կամ տնէն քիչ հեռուն գտնուած անպտուղ բարձր մի ծառի վրայ, այդ վազը կը փաթաթուի, կը բարձրանայ նոյն ծառի վրայ, կը պատէ ծառի ճիւղերը մինչև գագաթը, շիւղեր արձակելով այս այն կողմ, կանցնել մի այլ ծառի վրայ, զայս ևս պատելով երբորդի մը վրայ, տպա չորրորդի, մի անգամ ևս տեսար որ մի վազը պատած է ամբողջ կարգ մի ծառաստան և ընծիւղներ արձակած շատ հեռուն գտնուած անհպելի ճիւղերու վրայ, ուստի հնար չկայ խաղող քաղել:

Հինաւուրց խաղողի վազեր կան ոք 100 տաքեկան ծերունիք անգամ չեն գիտեր թէ երբ տնկուած են: Այս տեսակ վազերը տարին մի անգամ իրենց վրայի խաւը կը թողուն, որը վերէն ի վայր թել թել կը բաժանուի, որը տեղացիք կը վերցնեն աման լուալու համար, կամ ամանի բերանը կը դնեն, կաթը կամ այլ ծորուն նիւթեր քամելու համար:

Աղքատ դիւղացին հազիւ 1—2 վազ ունի, հարուստը 4—5 հատ: Մի վազէն, երբ յաջող լինի, 10—15 ձիու բեռ խաղող կը քաղէ գիւղացին:

Խաղողի քազը հետեւեալ կերպով կը լինի.

Քազով երեք գործիքով ծառ կը բարձրանայ, մի գործիքն է տերեսել կոչուած սակառը, որ մի մեթի երկարութիւն ունի,

ծայրը սուր - շաքարի դլխու ձեռվ, բերանը լայն և մի չուան կապած, ուստի մի կոկառ (կեռ փայտ) կապուած: Երկրորդ գործիքն է նինկեանեն, որ երկար ձողուն է, ծայրը երկճիւղ. այս երկճիւղի ծայրերը իրար կը փաթաթէ, որ կոտանայ բոլորշի ձև, ոյս բոլորշու տակէն կը կախէ տոպօրակ մի: Երբորդ գործիքն է երկար կոկառը, որ ձողի ծայրն է, որով հեռուն գըտնուած խաղողի շիւղերը մօտ պիտի քաշէ ճիւթերը (ողկոյդ) քաղելու համար:

Նախ քաղողը տերետելի կոկառը անցուց մի ճիւղի վրայ, տերէտելի կախ ընկաւ, մօտակայ խաղողները քաղեց, զետեղեց մէջը, ապա հեռուն դտնուած շարժուն ու կախուած շիւղերն երկար կոկառով իր մօտ քաշեց, նոյնպէս քաղեց, բայց այն շիւղերն որ ամբապինդ փաթութուած էին ճիւղերուն, քաշելու և է հսարաւորութիւն չկար. այդ տեղ ուղղեց ճիւղերնեանէն, ողկոյզի տակէն վեր բարձրացուց ծայրի բոլորշին, այնպէս որ ողկոյզի կոթը բոլորշու ծայրի անկեան մէջ ընկաւ. ճիւղերնեանէն քաշելուն պէս, ողկոյզը փրթաւ, ընկաւ տոպօրակի մէջ, և այսպէս շարունակեց, մինչև որ տոպօրակը լեցուեցաւ, յետ առաւ, դտատարկեց տերէտելի մէջ, շարունակեց, մինչև որ տերէտելը լեցուեցաւ: Այս անգամ տերէտելը չուանով կախեց, իջեցուց ցած: Տերէտելի ներքին ծայրը սուր լինելուն մանր-մունը ճիւղերն ու շիւղերը այս այն կողմ մղելով սահեցաւ, իջաւ ծառի տակ, ուր գտնուող մի ուրիշ անձ դատարկեց մեծ սակառի մէջ, թոյլ տուաւ վեր քաշելու և այսպէս շարունակեց: մինչև սակառը լցուեցաւ, ապա շարակելով տուն տարաւ. քամելու խաղողը լեցուց հայսի տաշտի մէջ, պահցուն կամ վաճառելուն տարաւ հովւասուն կորոպը որ մինչև ձմեռ պահէ:

Քաղողը մեծ նեղութեան մէջ է, նախ ծառի վրայ ոտնեւ ըստն տեղ պիտի անէ 30—40 կանգուն բարձրութեան վրայ. ճիւղերնեանէն երկաւ ձեռքով ճիւղերուն ծայրը գտնուած ողկոյզն երու կողմ պիտի ուղղէ. միաւմի պիտի քաղէ, այնպէս որ հաւասարակշռութիւնը չպիտի կորսնցնէ, պիտի աշխատի ամեն տեսած խաղողը ճիւղերնեի մէջ ճգէ, սակայն ի զուր, աւելի հեռուն սաթի պէս դեղնագոյն հատերով խոշոր ողկոյզները, որ քաղուածներու 4/5 ը կը կազմեն, ազատ կը մ'ան, թուշնոց կեր լինելու, կամ ձմեռը ձեան սպիտակ սաւանի վրայ թափին, մանուկները հաւաքեն ուտեն մի մասն, միւս մասն ևս թուշնոց կեր լինին:

Տուն տարաւած խաղողին մի մասը ձեռով քամեց. գինի, քացախ և ոռեփ պատրաստեց, մի մասն ևս սկսաւ հետզհետէ

շալակով կամ ձեռվ քաղաք տանել ու վաճառել:

Կը յիշեմ որ հօրեղբօրկինս մեծ կտթսայի մէջ լեցուց խաղողի քաղցունը, շորի մէջ փաթութած մոխիր ևս կախեց մէջը, մեղմ կրակի վրայ դրաւ, սկսաւ ամբողջ գիշեր խառնել, որ թանձրացաւ, եղաւ ուռփի. մի մասի մէջ ևս դղում ջարգեց, այնպէս եփեց, ըռեչել շինեց որ ձմեռը ուտենք:

Գիւղացին նաև կը անկէ գամոնի, սալորի, սերկնելի, հօնի, զղընի, գեղձի ևլն. ևլն. պտղատու թուփեր, որը հազիւ 5—6 կանգուն բարձրանան, որոց մեծ մասը կը պատուաստեն:

Ցունկերու մեծ մասը անտառէն արմատահան կանէ, տան շուրջը կը տնկէ, քանի տարի վերջը կը պատուաստէ:

Անտառներու մէջ ամեն տեսակ տունկ կայ. այդ ագռաւներու շնորհն է, ընտանի ծառերու պտուղներն ագռաւները խումբ խումբ եղած կը կրեն դէպի անտառը, ուր կը պահեն ձմեռուան պաշար. սակայն մի մասը խառնուելով զազելներու, այն տեղ կը ծլին, տունկ կը գառնան:

Պատուաստ.—Գիւղացին ծառերը հետեւալ ձեռվ կը պատուաստէ:

Վայրենի տանձը 1—2 կանգուն բարձր սղոցով կը կտրէ. խաչաձև փոքր ինչ կը ճեղքէ, ճեղքի շորո ծայրերը ընտանի ծառէ կտրած մի թեղ երկար բողբոջներու ներքին ծայրը կը մտցնէ, այնպէս որ բողբոջներու գրսի կեղեր հաստատուի ներքին—վայրենիի կեղեին վրայ, կամ մի ճեղք կը բանայ, երկու բողբոջ երկու ծայրերու մէջ կը հաստատէ. ապա վրան մամուռ կը փաթաթէ, մէջը և վերին երեսը փոքր ինչ հող կը լեցնէ, փոքր մամուռ ևս կը կին վրան կը փաթաթէ, վազէ թելերով կը կապէ: Մամուռը և հողը խոնաւ կը պահեն պատուաստի վիրաւոր մասը, որով շուտ մոամոլ (երկու բացուած ճեղքեր աճելով իրար կցուիլ) կը կապէ: Այնուհետեւ գիւղացին կը նայէ պատուաստներու աճելուն, եթէ շորո բողբոջներն ևս աճեցան, վայրենին ևս հաստ է, կարսու է աճեցնել, կը թողու, ապա թէ ոչ, մէկը կամ երկուքը կը կտրէ:

Նատ անգամ ընտանի բողբոջներու ներքին ծայրը կը խրեն կաղամբի կոթի ներքին կարծը մասի մէջ, վրան հող կտան, կաղամբի կոթը թէ միշտ դէն է և թէ երկար միջոց անփուտ, որով բողբոջի ներքին մասը կաղամբի կոթի մէջ արմատներ կը ձգէ. կաճի առանց վայրենիի վրայ պատուաստելու:

Պատուաստի ամենադիւրին եղանակն է այս:

Պատուաստներու մէջ ամենադժուարն մաշմրգի պատուաստն է, որուն շատ հմուտ վարպետ պէտք է:

Զգընին ես, որո՞ն մուծմուլս կառեն, ինքը ոերկեւիլի թփէն աւելի փոքր, պտուղն ևս սերկեւիլի ձեւ ունի, սակայն խորտ ու բորդ չէ, մեծութիւնն ևս ըսկուղի չափ կամ աւելի մեծ և կամ փոքր: Մյն որ պատուառտած է, խոշոր կը լինի. վարենին փոքր: Մէջը 5—6 երկարածեւ կարծը կորիզներ ունի, երբ համեն մուգ կարմիր գոյն կտտանայ, որպէս փտած տանձէ, միուր մեղրի նման ծորտն վիճակ մը կտտանայ, երեսը թարակ շամլեկով պատած: Թէ կուտեն և թէ կը վաճառեն:

Խնչպէս պտուղն այնպէս ես տերեւներն ու թփերն սերկեւ ւելենին նման են, սակայն շատ փոքր:

Դամոնի քանի տեսակները կան, մանը և խոշոր պտուղ կտան, երկուքն ես ունին սպիտակ ու սև տեսակները, պտուղները կլոր չեն ինչպէս սալորը, այլ երկարածեւ, մը կողմը ճեղքուածի պէս ներս մտած:

Սալուենին նաև ունի բազմաթիւ տեսակները ու, կարմիր, գեղին, կանանց մսխագոյն են. գոյներով պտուղ կտայ որ կլու է, թթու և քաղցր: Սորա պտուղն ևս թէ կը վաճառեն և թէ տան համար կը գուծածեն:

### Վայրենի ծառեր եւ անտառ.

Խնչպէս առացի, հայոգիւղացիք ծովեղերքէն հեռի բարձր, անտառավայրերու մօտերը կը ընակին մեծաւ մասամբ: Իր ամեւնացն լինը լինը կը մահմանին մէջն է. իր մանտառը, կաղնուտը, տնկարանը արտն են. իր անտառներն իրեն յառկացուած տահմանէն գուրս չենագար:

Գիւ զացու տան մօտ մնկուածի կան թեղի, հայցի, մանի, պղինի, լուզկաղնիւր կուլնիւն: անտառային ծառեր. ողքա պտուղ չեն տար: Քանին մնկուած են կրան խաղաղի որթ տաւ լու համար: Քանին ևս յառեւ ու տերեւները անասնոց կերցնելու համար: Թեղին քանի յօտեն, տերեւները կը լաւանայ, անտունք ու տելու կաթ շատ կտան պղինին ևս ցանցառ տերեւներ ունի, խսդողի որթը վրան լաւ կամի, վասն զի՞թէ որթի ընձիւղները:

և թէ խազողը շուքի տակ չընկնելուն՝ լաւ կաճի, նոյնպէս է մանին, որ հացիի մի տեսակն է:

Տանը մօտ գտնուած անտառակներ ու հեռուն գտնուած անտառներու մէջ կան բազմատեսակ ծառեր. այս ծառերէն կօգտուի գեւղացին, թէ պառւղներէն. թէ տերեներէն և թէ բողբոջներէն ու փայտէն:

Մաշմուգին, որ անտառներու մէջ բազմաթիւ է. ծառերէն ընտիր գերան ու տախտակ կը շինեն. մաշմուրգը առատութեամբ կը հաւաքեն, կուտեն կը վաճառեն և կամ շարան շինելով կը չորացնեն. ձմբան կը խաշեն, կուտեն, տերեն ևս օգտակար է:

Ծուաղնին, որ թէկ մանը պառւղ կտայ. սակայն շատ համեղ է, քան ընտանին ևն:

Անպտուղ ծառերէն քանիին թէ տերեները և թէ փայտը օգտակար է. թեղին թէ տերեները պոյզեն անասնոց կեր պատրաստելու համար կը չորացնեն. փայտէ ևս տաշտ, գայսան, կահեր կը շինեն: Նոյնպէս է նաև խոզկաղնին ևն.: Կաթնտերեալին որ թերես հերցին է. Նոյնպէս եր կաթոտ լայն տերեներով օգտակար է անասնոց և մարդոց եր տախտակներով: Կըվընին (չամ) որ առատ ձուր կոչուած խէժը կտայ, փայտը գիւրավատ խէժոտ լինելու, մարխ կամ կպչան կը պատրաստեն կը ալ վառելու համար. տեղ տեղ իբրև ճրագ մի թիզ մարխի ծայրէն կը վառեն, որ 1—2 ժամ առատ բացով կը վառի. սակայն ծուխ շատ կտայ: Սորա խէժը որ փութերով կը հոսի արմատի շուրջը, ձութ կասուի. շատ մաքուրները, որ պատանիք ու աղջկունք իբրև ծամոն կը գործածեն—կիվ կասուի: Այս ծառի բունը գերան ու տախտակ կը շինեն. իբրև վառելիք կը գործածեն:

Աֆրին ու լորին անտառներու ամենահսկայ ծառերն են. ասոնցմէ ընտիր ածուխ կը պատրաստեն. քաղաք կը տանեն վաճառելու:

Վայրենի կաղնին, որ անտառներու մէջ լաւ կաճի. թէ պառւղն և թէ բողբոջները օգտակար է. այս թուփի բողբոջներէ ծօն կը հանեն. այլ և այլ տեսակ ոսկառներ կը հիւսեն. որոյ վրայ առանձին պիտի խօսիմ:

Լաշին, որ թուփի է, ձմեռն ևս կանաչ է, մեծ տերեները թէկ անասունք չեն ուտեր. սակայն իւրաքանչիւր ճիւղի ծայրը գըտնուած՝ բոլորշի շարուած տերեները միասին կը կտրեն, կը տաքացնեն. օրորոցի մէջ երեխայոց նստատեղի տակ կը գնեն. ճըկուն բուներէն աթոռներ ու թիկնաթոռներու ոտք կը շինեն. մեղուները այս թիկի մեծ ու կապոյտ ծաղկներէն կօգտուին.

առատ մեզը կը պատրաստեն:

Հօնին, որ դգլնուխ կասեն գիւղացիք, անտառներու մէջ շատ առատ է, ունի շատ կարծր փայտ, մէծ թռւփերու կարգէն է, առատ պառւղ կտայ. կայ ընտանին, որ ձեթապտուղի մեծութեամբ պառւղ կտայ, աւելի երկար ու կարմիր, աւելի կարծր կորիդ ունի: Այս ծառը գարնան ամենէ շռւտ կը ծաղկի, սակայն պառւղը ամենէ ուշ կը հանի. որու համար տեղացիք սատանան խափող: Կասեն: Կասեն թէ սատանան շռւտ ծաղկիլը տեսաւ, գնաց տակը նստաւ, որ պառւղը շռւտ ուտէ, սակայն տեսաւ, որ ամեն պաղեղենէ ուշ հասաւ, քարկութենէ պայթեցաւ:

Անտառներու մէջ թափած այս թթուաշ հոնիի պառւղը մէծ քանսիկութեամբ կը հաւաքեն, պաստեղ կը շնուեն, կը վաճառեն. ընտանին ևս քաղաք տանելով կը վաճառեն:

Կայ նաև անտառի մէջ գափնիի տեսակ մի թռոփ, որ տերեները չթափէր. եւակի պառւղէն աւելի խոշոր նոյն ձեռով պառւղ կտայ, այնպէս առատ որ ճիւղերը գետեն կը խոնարհեցնէ: Այս պառւղը կակուղ լինելուն զօնա եմելի (Ճերի ուտեւթը) կասեն. քաղցը ու տափակ է, այնչափ յարգի չէ. միայն վերջերս սովորեցան այդ պաղեն օղի հանել մեծ քանակութեամբ:

Պցկին ևս որպէս տան շռւթը՝ այնպէս ևս անտառներու մէջ կանի, հսկայ ծառ կը գառնայ. վայտը կակուղ է, վառելու համար այնչափ յարգի չէ. պառւղ երբէք չտար. ծառի բնէն տաշտեր պնակներ են. կամեր կը շնուեն: Սա ևս այն ծառներու կարգէն է որ չհայթիր: վայտը կամուրջներու հիմերու տակ կը դնեն. Չը մէջ աւելի կամբանայ շփթիր, ոորա համար «պառկէ պցկի պառկէ, ինչու որ ջրի մէջ ես», առաջը յօրինած են:

Բացիսուին ևս թռւփերու կարգէն է. դափնիի նման մըշտագալար տերեւ ունի. ոսկայն տերեւներու եղերքները փշուած է. ձմեռը երբ անասունք կեր շտւնենան, այս ծառերու տերեւները կը կերցնեն:

Կաթնաերեպին միջակ ծառ է. ճիւղերը տարածուած՝ մարդու երկու ափի շափ լայն կլոր տերեւ ունի. որ յզկուած անօթի նման կանանչ փայլ կտայ. եղերքները քանի տեղ քիչ ճեղքուած և կաթսոտ, որ անասունք շատ կը սիրեն:

Լորին աւելի մեծ ծառ է. աժրիի մի տեսակն է, սակայն մէծութեամբ աժրիին չհանիր. սորա տախտակը յարգի է, սորանէ ևս այլ և այլ կահեր կը շնուեն գիւղացիք իրենց գործածութեան համար:

Ա.Փրի հսկայ ծառեր, որ մեծ անտառներու խորը տռանձին ընդարձակ վայրեր գրաւած են շատ քիչ անդամ պէտք կը գան գիւղացաց։ թէև վայտը վառելու կդայ։ սակայն անհպելի վայրեր աճած լինելոյն գիւղացիք հազիւ ածութ շինելու համար այս ծառերուն մերձնեան։ տախտակ ու տան կահեր շինելու յարմարութիւն չունի. եթէ շինուեն ևս չորացածին պէս կը ճեղքուին։ Այս հսկայ ծառը մանր շադանակի կիսու մեծութեամբ պառւղ կտայ, որ խողերն ու արջեր կուտեն, որուն կընցղու կասուի։

Տոսխին, որ անտառային փոքր ծառերու կարգէն է. ունի կարծը փայտ. 8—10 կանգուն բարձրութիւն. ամառ ձմեռ շատ կանաչ է. կը գտնուի աւելի ծովեզրեայ անտառներու մէջ և դանտաղ կաճեն. փայտի արժէքը մեծ է, եւրոպացի վաճառականները կը գնեն։

Վայրենի զէյթին, որ առհասարակ ժայռոս տեղեր կաձի, թուփերու կարգէն է. պառւղ շտար. ձմեռը տերեները կանանչ ձմեռն երբ անասնոց կերը պակսի, այս թփի ճիւղերը կը յստեն անասնոց կը կերցնեն։

Անիծի. — Այս ծառն ևս մեծ ծառերու կարգէն է. նման մանի և հացի ծառերուն, որը գերանի և մարդակի համար կը գործածուի, նաև վառելու։ Սորան ծընծղի ևս կատուի։

Քօծղի. — ծառ միջակ մեծութեամբ։

Գերմասրի. — Մեծ թուփի, փոքր ծառերու կարգէն. մէջը դատարկ, մանր, մատի հաստութիւն ունեցող շիւղերը կը կտրեն. մաս-մաս բաժանելով մասուր կը շինեն։

Դիմիլին ևս ծառ է. ըստ թուրքաց կալաղան, աղանի։

Ըղուըթենի. — ծառ. թուրքեր ագրապ աղանի կասեն։

Ծորենի. — Անտառային թուփի մասրի թփի շափի. 3—4 կանգուն կը բարձրանայ. կեղեր սպիտակ. փայտի մէջ գեղին. պտուղը խաղողի փոքր ողկոյզի շափի և նոսր։ Հատերն երկարածեն և քաղցր, քիչ թթուաշ. ախորժելի համ ունի. նուան հատերու պէս ջրոտ, բայց սերմերը շատ մանր։

Ծըրթուենի. — ծառ նման թեղին (դարատ աղան). իսկ տերեւները եղենին նման. պառւղը նախ կանաչ, ապա գեղին և վերջը կարմիր գոյն կսանանայ։ Այս ծառի մոխրի հետ կարագ, ձու կը շաղախեն, իբրև գեղ վերքի վրայ կը գնեն, որ անմիջապէս ցաւը կը մեղմացնէ։

Կրօի. — թուփ է, ունի լայն տերեւ, թղթէ աւելի բարակ և ընկուզի մեծութեամբ սերմնարան, որ մէջը մեծ մասամբ դատարկ է, միայն մի մեծ կորիզ ստորին մասի մէջ զետեղուած

է, երկու կեռասի կորիզի մեծութեամբ։ Այս կորիզներն և դատարկ են և սպիտակ, զորս երեխայք կը հանեն, համըիչ կը շենքն, սերմնարանն ևս տփերու մէջ կը դնեն, միւս ձեռներով վրան կը դարնեն, մէջը օդով լցուած լինելուն կը պայթի։

Հորցենի. — Ճառ։

— Սսեղի. — Դեղձի թվի չափ կաճի ու կը չուանայ. կեղեք սպիտակ, կակուղ և խաւ-խաւ, փայտը իբրև բիր գործածելու համար վրան տաք հաց կը փաթութեն, որ և կանաչ գոյն կը ստանայ, կը փայլի. ոս սիսեռի հատի չափ կարմիք քաղցը պտուղ կտայ, տերեն ևս փշատի տերենի նման։ կեղեն ևս իբրև ամանուայ, կամ սըբիչ կը գործածեն, ինչպէս խաղողի վազի կեղեն։

Տօռնի. — Թուփի է 2 կանգուն բարձր, ասեղածեւ տերեներ ունի. տաճ. իլուն։

Ցըտերեպի. — Փոքր Ճառ, լայն ու պատառուած տերեւներ ունի։

Այս մեծ ու հսկայ անտառները բունած են Տրապիզոնի նահանգին բարձր մասը, որ կը տարածուին յարեմուտ մինչև Կիրասօն։ յարեելս՝ Ու գետ, համշէն և մինչև ձորոխ։ Այս ընդարձակ անտառներն, որ հսկայ ծառերով պատած են ամեն ուրեք, դարերով մարդու երես տեսած չեն։ հաղիւ տեղ տեղ արահետ մը կը դանես անց ու դարձ անելու. մեծամեծ Ճառեր, որ ուղղուած են յերկինս, պատել կը նկրածին երկնից կամարը. հըսկայ ճիւղերը սանձարձակ տարածուած իրար խառնուած լինելով արեգական ոչ թէ ճառագայթները չեն թափանձեր, այլ կարծես թէ թանձը ամպամած մինուրդի մէջ կը գտնուիս։ Բնութեան մէջ մահն շատ քիչ անգամ կաղդէ այս հսկայ ծառերուն միայն կայծակն է, որ երշեմն ահագին կոտորածներ կանէ. 10—20—100 Ճառ մի ակնթարթի մէջ գետին կը տապալէ մեծ ճարճատիւնով և իրար վրայ կը կուտակէ։ Դու գոնէ մի անգամ ականատես լինէիր, որպէս ես եղած եմ, պիտի տեսնէիր մեր նոտած տան հանգէպը բնութեան այս մեծ պատերազմը ինչպէս կը վերջանայ. կայծակի խլացուցիչ գոռոցը, հսկայ ծառերու տապալման ճարճատիւնը իրար խառնուած, ամբողջ ձորը կը դղրդեցնեն, այնպէս որ մեծ սոսկման ենթարկուելով ամբողջ մարմնով պիտի քոտմնէիր։ պիտի տեսնէիր թէ մէկը միւսի ետևէն ինչպէս ծառեր արագ արագ գետին կը շարուին։ կողերու վերայէն խոր փոսերու մէջ գլորուելով իրար վրայ կը կուտակուին, ծտուէ ըլուր կը կազմեն։ Եթէ այդ տեղէն լինէր քո ճանապարհն այլես չպիտի կարողանայիր անցնիլ։ ուրիշ ճանապարհ ևս հաղիւ ուրեք ճարտի, պիտի ստիպուէիր օրերով

յեա դառնալ, մի այլ ճանապարհ որոնել քեզ համար: Եսկ եթէ միանդամայն քո առաջը ևս պատահած լինէր այս բանը գույ յաւիտենական բանտարկութեան դատապարտուած պիտի լինէիր կամ հազար ու մի տանջոնք կրելով և ցմահ մաքառելով թերեւ աղատուէիր, եթէ դազանաց ճիթաններուն չմատնուէիր:

Այս անտառներու մէջ դարեր տեսնող հինուուրց ժառանքու փապարներն կո պատոպարան են անցորդներուն, որք անձրեային եղանակի մէջ այնտեղ կապաստանին: Այսպիսի անտառներու մէջ, ես եօմտըրայէն ի Սլուրմէնէ գնալու միջոցին Մատուռի անտառներու մէջ լսիստ անձրեի ըռնուած լինելով երեք անձով երկու ձեսվ մի աժըի ծառի վրապարի մէջ ապաստան գտած եմք:

Մէծ անտառները, որպէս ասացինք, քաղաքի շրջականներց 1—2—3 աւուր ճանապարհ հեռի կը գտնուեն. շատ անգամ մարդոց անպէտք, վասն զի փայտեղէն նիւթեր հայթայթելու համար ճանապարհ չունեն. գիւղացիք աւելի մօտակայ անտառներէն կօգտուին, այն որ մէրէ (թագաւորական) է, կամ ամեն մի տուն իր սեփական մորիէն, որ տանը մօաէ; Գիւղացին ուղած ծառը կացինով կը կտրէ արմատի մօաէն, կը տապաէ և կը թողէ որ չորակայ, ապա գերան, տախտակ տաշտ ևն. կահեր կը շինէ, քաղաք տանելով կը վաճառէ և կամ մեծ քանակութեամբ ածուխ կը պատրաստէ, ամըողջ քաղաքի համար իրեւ վառելիք կը գոստածուի. թէ աներու մէջ և թէ արհեստաւորները, վառելիք փայտը միայն փոերու համար կը դոբծածէն: Քաղաքացին իր սենեակը ածուխի կրակով կը տաքացնէ, նոյնպէս լուացը, կերակուրի պատրաստութիւնը, հեշտաենը ևն, ածուխի կրակով պիտի անէ, այնպէս ևս դաշտենը, պինձագործը, ուկերեւը, ևն, ևն, ածուխ կը դործածէն, որով մեծ քանակութեամբ գիւղացիք ածուխ կը տանեն քաղաքը կը վաճառէն: Մէծ մասամբ շալակով կը տանեն:

Այս տեսակ անտառակներու կամ մօրիներու գիւղացին զախուս կառէ, որ իրեն յատուկ է. իւրացնող վաւերագիր ունի կառավարութենէն առած, որու համար տարեկան տուրք կը վճարէ. ոչ ոք իրաւունք չունի պարա սահմանէն ծառ մի կտրելու: Գիւղացին միշտ իրեն յատուկ անտառին, որ ինքնարոյէ, ինսամ կը տանէ, աւելորդ ծառերը կը կտրէ, կը յոտէ, երբեմն ևս ամըողջ անտառը ածխադործներուն կը վաճառէ. ածխադործը ամըողջ անտառի ծառեր արմատէն կը կտրէ. ածուխ կը շինէ: Հետեւեալ տարին կտրուած անտառի սողոջները կաճին:

դիւղացին անտառուն չթողուր մէջը մինչև բողբոջները 4—5 կանգուն բարձրանան. միայն աւելորդ ընծիւղները կը կտրէ. անտառոց առաջ կը գնէ, որ ուտեն, կամ անտառակի մէջ մի յարմար վայր կը թափէ. անտառները վրան կը հաւաքէ, որ ուտեն. աւելորդ ցախն ևս տուն կը տանէ վառելու համար:

Ահա ձեզ անտառային ծառեր ու թուփեր, որով Տրապիզոնի հայ գիւղօրէից մօտակայ և հեռաւոր անտառակներն ու անտառները զարդարած են և ի վերջաւորութեամբ հայկական կնիքը պահած են: Շատ հազուագիւտ է առանց ի վերջաւորութեամբ ծառ կամ թուփ նշմարել. եթէ լինի ևս օտար բառ լինելը իսկոյն կը հասկացուի. վասն զի յոյներ և թուրքեր նոյն բառն ևս կը գործածէն. մինչդեռ նոքա ի վերջաւորութեամբ ծառի անուն չունին երբէք:

Մօտակայ անտառներն, ուր կարողացած են հայ գիւղացիք թափանցել, ծառերն ու թփերն իրենց ոլիտոյից համար դորժածել, փշերը ջարդ ու փուրդ անելով արահեաներ բացած են. ամրան ժամանակ մի դրախտ է. զանազան վայրենի և միանդամայն ընական համ ունեցող զանազան մրգեր աջ ու ձախ ամեն կողմդ կը տեսնուին. իսկ դու ինչ ցանկութեամբ շտապած ես անտառը, քեզ հաճելի պտուղ արտադրող ծառերու կամ թփերու խմբի կողմը վազէ:

Իսկ ես սոյն հարեանցի նկարագրութիւնո թողլով կոկսիմ հայ ժողովրդեան իսկական երկրագործութիւնը—չարքաշ կեանքը նկարագրել որչափ որ իմ ուժերը կը ներէին:

### Ս. Հայկունի.

Յմիք չ զարդ ավագիկարան զմանք և զմանամ յաղատական և ԱՐԱԿԱՆԱՌՄԵ հուման ԲՇԱԼՈՒ հուման առնամ ԱՐԱԿԱՆԱՌՄԵ կուտակ և ԱՐԱԿԱՆԱՌՄԵ պատահական իւր փողմնարդ պար և Արդմասը այս մասնաւութ ԱՐԱԿԱՆԱՌՄԵ և ԱՐԱԿԱՆԱՌՄԵ պատահական մուսա

